ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashirhamaynq@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

31 մարտի 2025 թվականի N 316-Ա

«ՀՈՎՀԱՆՆԵՍ ՍՏԵՓԱՆՅԱՆ» Ֆ/Ա-ԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՀ Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարանի կողմից 28.02.2025-ին հայտարարված «ՀՀ ԼՄՏՀ-ԷԱԵԱՊՁԲ-25/18» ծածկագրով ՀՀ Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարանի կարիքների համար թափառող կենդանիների ստերիլիզացման/ամլացման ծառայությունների ձեռքբերման ընթացակարգին հայտ ներկայացրած Հովհաննես Ստեփանյան Ֆ/Ա -ն/ այսուհետ՝ Մասնակից/ խախտել է գնման ընթացակարգի շրջանակում ստանձնած պարտավորությունը:

Գնահատող հանձնաժողովը, 12.03.2025-ին կայացած նիստի ընթացքում ուսումնասիրելով մրցույթի միակ մասնակից Հովհաննես Ստեփանյան Ֆ/Ա-ի ներկայացրած հայտը,արձանագրել է՝ հայտում բացակայում է դիմում հայտարարությունը:

Գնահատող հանձնաժողովը,հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017-ի «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» N526-Ն որոշման 41-րդ կետի պահանջները, կայացրել է որոշում նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնելու մասին՝ Հովհաննես Ստեփանյան Ֆ/Ա-ի կողմից ներկայացված հայտի անհամապատասխանությունները շտկելու նպատակով:

Գնահատող հանձնաժողովը 14.03.2025-ին կայացծ նիստում արձանագրել է, որ Հովհաննես Ստեփանյան Ֆ/Ա-ն հայտի անհամապատասխանությունները չի վերացրել և առաջնորդվելով ՀՀ կառավարության 04.05.2017-ի «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» N 526-Ն որոշման 42-րդկետի պահանջներով՝ Մասնակցի հայտը մերժել է:

«ՀՀ ԼՄՏՀ-ԷԱԵԱՊՁԲ-25/18» ծածկագրով գնման ընթացակարգի չկայացած լինելու մասին հայտարարությունը 19.03.2025-ին հրապարակվել է տեղեկագրում:

Ղեկավարվելով «Գնումների մասին »ՀՀօրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով և նույն հոդվածի 2-րդ մասով՝

Որոշում եմ՝

1. Հովհաննես Ստեփանյան Ֆ/Ա-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:
2. ՀՀ Ֆինանսների նախարարություն ներկայացնել Հովհաննես Ստեփանյան Ֆ/Ա-ի տվյալները՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Է. ԱՐՇԱԿՅԱ

2025թ. մարտի 31
ք.Տաշիր